ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԵՐԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՂ ԴՐԱՅՎԵՐՆԵՐԻ /ՈՒՂԵՐՁՆԵՐԻ/ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄՈՏ

Խանամիրյան Ի. Ռ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)
Առաքելյան Մ. (Ա. Շիրակացու անվան ճեմարան, Երևան, Հայաստան)
irina.khanamiryan@gmail.com, mararaqelyan20@gmail.com
Ներկայացման ամս.՝ 28.07.2019
գրախոսման ամս.՝ 02.08.2019
տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Կենսական դիրքորոշումների, պատկերացումների, վերաբերմունքների, դերային սցենարների հիմքերը ընկած են մանկության տարիներում: Բնականաբար, հիմնական և նշանակալի են այն դիրքորոշումները, ուղերձները, վերաբերմունքը, որոնք տրվել են ծնողների, հատկապես մայրերի կողմից: Սույն հայացքները հատկապես ուսումնասիրվել են տրանսակտ վերլուծության դպրոցի կողմից: Մասնավորապես, Թ. Քայլերը, առանձնացրել է հինգ հիմնական ուղերձներ/դրայվերներ, որոնք ազդեցություն ունեն հասուն կյանքում դրսևորվող վարքային պաթերների վրա: Հոդվածում ներկայացված է հայ կանանց գերակայող դրայվերների և ընտանեկան դերերի միջև առկա փոխկապակցվածությունը, դուրս են բերված այն հիմնական ուղերձները, որոնք բերում են այս կամ այն վարքային դրսևորումներին:

Հանգուցային բառեր՝ *գերակայող ուղերձ, կյանքի սցենար, ընտանեկան դերեր:*

Յուրաքանչյուր մարդ իր կյանքի ընթացքում իրականացնում է բազում դերեր: Դերը ընդունված նորմերին համապատասխանող անձի սոցիալական գործառույթ է, մարդկանց վարքաձև, որը բխում է միջանձնային հարաբերությունների համակարգում նրանց կարգավիճակից, հասարակությունում զբաղեցրած դիրքից: Սոցիալական բազմապիսի դերերի շարքում կարևոր տեղ են զբաղեցնում ընտանեկան դերերը, որոնք բնութագրում են մարդու վարքաձևը ընտանիքում ընդունված նորմերին համապատասխան [3] :

Ընտանիքում դերային կառույցի առաջացման գործընթացը, ըստ Լ. Բ. Շնեյդերի, նրա՝ որպես սոցիալական և հոգեբանական հանրության ձևավորման, ամուսիններից յուրաքանչյուրի միմյանց հարմարման և ընտանեկան կյանքի ոճի մշակման կարևոր կողմերից մեկն է [4, 112]:

Ըստ Յ. Ե. Ալյոշինայի ընտանիքում առկա են հետևյալ հիմնական դերերը. ընտանիքի նյութական ապահովման պատասխանատու, տնտեսվար (տնտեսուհի), նորածնի խնամքով զբաղվողի պատասխանատուի դեր, դաստիարակի դեր, սեքսուալ զուգընկերոջ դեր, ժամանցի կազմակերպողի դեր, ընտանեկան ենթամշակույթի կազմակերպողի դեր, բարեկամական կապերը պահպանողի դեր, «հոգեթերապևտի» դեր [2]:

Երեխայի մոտ ընտանիքում կնոջ դերի վերաբերյալ պատկերացումները ձևավորվում են դեռևս մանկուց: Այդ դերային պատկերացումների ձևավորման վրա ազդող կարևոր գործոններն են՝ ծնողական ընտանիքում մոր դերն ու կերպարը, տվյալ մշակույթի առանձնահատկությունները, ինչպես նաև մանկության շրջանում ստացած դիրքորոշումներն ու ուղերձները, կամ, ըստ տրանսակտ վերլուծողների դրայվերները:

Համաձայն տրանսակտ վերլուծության դպրոցի ներկայացուցիչների /Է. Բեռն, Կ. Շտայներ, Թ. Քայլեր/ երեխայի կյանքի սցենարի ձևավորման վրա ազդում են ծնողներից եկած խոսքային ուղերձերն ու հաղորդագրությունները: Բոլոր մարդիկ ստանում են նմանատիպ ուղերձներ: Որոշակի տարիքում, մասնավորապես բարոյական հասկացությունների ձևավորման փուլում, այդպիսի ուղերձները ունենում են կարևոր նշանակություն երեխայի անձի ձևավորման համար: Ուղերձները հաճախ անվանում են հրահանգներ /driver/, քանի որ երեխան, հետագայում մեծահասակը այդ ուղերձներին հետևելու հույժ կարիք է զգում: Մարդը վստահ է լինում, որ առաջնորդվելով նման ուղերձներով, ձևավորում է դրական վարք և ընտրում է դրական կենսուղի: Երբեմն հրահանգները այնքան կարևոր դեր ու նշանակություն են սկսում խաղալ մարդու կյանքում, որ նա իր ողջ էներգիան ուղղում է դեպի այդ հրահանգի իրականացումը, ինչի պատճառով տուժում են մարդու կյանքի տարբեր ոլորտներ: Մարդը, կարծես, սեփական որոշումների, համոզմունքների, հրահանգների գերի է դառնում [1]:

Ամերիկացի հոգեբան Թայբի Քալերը հետազոտել և նկարագրել է կյանքը ուղղորդող հրահանգների 5 տեսակ՝

1 «Ձգտիր կատարելության»: Այս հրահանգի գերակայման դեպքում, մարդիկ միշտ ձգտում են անել իրենց հնարավորություններից ավելին, ունեն մոտիվացիայի բարձր մակարդակ և երբևէ չեն բավարարվում իրենց ձեռքբերումներով:
2 «Ուրախացրու ուրիշներին, եղիր հաճելի և սիրալիր»: Այս հրահանգով առաջնորդվող մարդիկ չափազանց զգայուն են դիմացինների ասածների, արարքների, հակազդումների հանդեպ: Փորձում են ամեն գնով ձեռք բերել դիմացինի դրական վերաբերմունքը: Դիմացինի ցանկությունները և պահանջմունքները ավելի կարևոր են, քան սեփականը:
3 «Միշտ փորձիր, ուժերից վեր, բոլոր ջանքերդ ուղղիր դեպի ընթացք»: Տվյալ հրահանգ կրողը ունի լարվածության մեծ մակարդակ: Այս հրահանգի խորքային իմաստը նրանում է, որ կյանքը մշտական պայքար է, անընդհատ պետք է աշխատել արդյունք ձեռք բերելու համար:
4 «Եղիր ուժեղ»: Այս հրահանգը ուղղված է զգացմունքները ճնշելուն, հուզականություն չդրսևորելուն: Երեխան մեծանում է՝ հասկանալով, որ զգացմունքներ ցույց տալը թուլության նշան է, նա պետք է կարողանա ցանկացած իրավիճակում լինել ուժեղ, զսպված: Նմանատիպ մեծահասակները սովոր չեն լսել իրական պահանջմունքներն ու ապրումները, մշտապես ներկայանում են որպես սառնասիրտ, ուժեղ և հավասարակշռված: Նրանք խուլ են լինում նաև այլ մարդկանց զգացմունքների հանդեպ, չեն կարողանում ապրումակցել դիմացինին:

5 «Շտապիր»: Նմանատիպ հրահանգի գերակայման դեպքում, մարդը անհանգիստ է, սովոր է ապրել մշտական ռիթմի մեջ, ունի ակտիվության մեծ մակարդակ, ամեն ինչ անում է շտապելով, վազքով, վերջին պահին: Կարող է պատասխանատու գործեր ձեռնարկել, հասցնել ժամանակին, սակայն ի հաշիվ իր հուզական և ֆիզիկական առողջության: [5]

Նշված հրահանգները կարող են դրական ազդեցություն ունենալ մարդու կյանքում, սակայն ծայրահեղ արտահայտման դեպքում կարող են վնասել մարդու հոգեկան և ֆիզիկական առողջությանը [1]:

Տեսական վերլուծությունը հիմք հանդիսացավ ուսումնասիրելու կանանց ընտանեկան դերերի և դրայվերների փոխկապակցվածությունը:

Հետազոտական **ընտրանքը** կազմում են 3-10 տարեկան 1 երեխա ունեցող 100 մայրեր: Կիրառել ենք հետևյալ **մեթոդիկաները**. Ե. Ս. Շեֆֆեր, Ռ. Կ. Բելլի «Parental Attitude Research Instrument – PARI» մեթոդիկան՝ ադապտացված Տ. Վ. Նեցշերի կողմից, Գերակայող դրայվերի դուրսբերման հարցարան՝ վերցված տրանսակտ վերլուծության ռուսական կայքից՝ թարգմանված Վադիմ Շումիլովի կողմից, Յու. Ե. Ալյոշինայի, Ա. Յա. Գոզմանի, Ե. Մ. Դուբովսկայայի կողմից մշակված «Ընտանիքում դերերի բաշխման» հարցարան:

Դրայվերների փոխկապվածությունը ընտանիքում կնոջ զբաղեցրած դերերի ու երեխայի նկատմամբ հուզական վերաբերմունքի միջև պարզելու համար իրականացրել ենք կոռելյացիոն վերլուծություն՝ Սպիրմենի մշակած կոռելյացիոն գործակցի մեթոդով: Արդյունքները վերլուծվել են SPSS 21 վիճակագրական վերլուծության փաթեթի միջոցով:

Ընդհանրացնելով արդյունքները, կարող ենք դուրս բերել հետևյալը՝

1 Հետազոտական ընտրանքում մայրերի մոտ գերակշռում են դրայվերների արտահայտվածության միջին մակարդակ: Սակայն համեմատաբար բարձր արտահայտվածություն ունի «եղի՛ր կատարյալ» դրայվերը (ուղերձ), իսկ ցածր՝ «ուրախացրո՛ւ ուրիշներին» դրայվերը (ուղերձ):
2 Զուգընկերոջ դերում, ըստ իրացման արտահայտվածության աստիճանի, առաջատար են «երեխաների դաստիարակությամբ զբաղվողի», «տնտեսուհու», «հուզական մթնոլորտն ապահովողի» դերերը, իսկ ամենաքիչ արտահայտվածությունն ունի «ընտանիքին նյութապես ապահովողի» դերը:
3 Եղի՛ր ուժեղ» դրայվերը ունի ուժեղ դրական փոխկապակցվածություն «երեխաներին դաստիարակողի» սանդղակի (r=,351, p=,000), դրական փոխկապակցվածություն ընտանիքին նյութապես ապահովողի» (r=,198, p=,048), «ժամանցի կազմակերպողի» (r=,202, p=,044), «տնտեսուհու» (r=,235, p=,019), հետ: Ամենամեծ քանակությամբ ընտանեկան դերերի հետ փոխկապակցվածություն ունի այս դրայվերը: Այսինքն կարող ենք ասել, որ ընտանեկան դերերի իրացման արտահայտվածությունը պայմանավորված է հիմնականում այս դրայվերով: Ինչպես «եղի՛ր կատարյալ», այնպես էլ «եղի՛ր ուժեղ» դրայվերի բարձր արտահայտվածություն ունեցող կանանց մոտ բարձր արտահայտվածություն ունեն

երեխաների դաստիարակությամբ զբաղվողի և տնտեսությամբ, կենցաղային հարցերով զբաղվողի դերերը: Կարելի է նկատել, որ ուժեղ լինելու ներքին ձգտումը դրդում է հնարավորիս ավելի շատ դերեր իրականացնել ընտանիքում:

4 «Եղի՛ր կատարյալ» սանդղակը ունի փոխկապակցվածություն հուզական վերաբերմունքի բոլոր սանդղակների հետ: Այն ունի ուժեղ դրական փոխկապակցվածություն «արդյունավետ հուզական շփում» (r=270, p=,007), «երեխայից հուզական հեռավորություն» (r=423, p=,000) և «երեխայի վրա կենտրոնացում» (r=387, p=,000) սանդղակների հետ: «Եղի՛ր կատարյալ» դրայվերի արտահայտվածություն ունեցող կանանց համար մեծ կարևորություն ունի երեխաների դաստիարակությամբ զբաղվելը: Ուստի կանխատեսելի էր նաև, որ արդեն մոր դերում այս կանանց մոտ կլինի փոխկապակցվածություն հուզական վերաբերմունքի տեսակների հետ: Ինչպես գիտենք յուրաքանչյուր դրայվեր կարող է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն ունենալ վարքի վրա: Եվ այստեղ էլ, «արդյունավետ հուզական շփում» սանդղակի հետ փոխկապակցվածության առկայությունը ցույց է տալիս, դրայվերը կարող է դրդել մորը ունենալ բարենպաստ հուզական փոխհարաբերություններ երեխայի հետ, նպաստել նրա ակտիվության զարգացմանը, չարժեզրկել երեխային ու նրա հույզերը: Իսկ բացասական ազդեցության մասին վկայում է «երեխայից հուզական հեռավորություն» և «երեխայի վրա կենտրոնացում» սանդղակների հետ փոխկապակցվածության արտահայտվածությունը: Այսինքն «եղի՛ր կատարյալ» դրայվերի բարձր արտահայտվածություն ունեցող մայրերը կարող են նաև զսպել իրենց հույզերը, չարտահայտել դրանք, որի հետևանքով նրանց մոտ կարող է առաջանալ լարվածություն, կարող են դառնալ ավելի դյուրագրգիռ, ավելորդ խստություն ցուցաբերել երեխայի նկատմամբ, կամ էլ կոնֆլիկտից խուսափելու համար ուշադրություն չդարձնել իրենց և երեխայի հույզերին: Կամ, ընդհակառակը, կատարյալ լինելու իրենց մղումը փոխանցելով երեխային, կարող են չափից շատ կենտրոնանալ նրա վրա, ունենալ երեխայի հնարավորությունները գերազանցող սպասելիքներ և արդյունքում ճնշել նրա կամքը, ագրեսիայի, բարկության, այլ հույզերի արտահայտումը, մուտք գործել անձնական տարածք, լինել չափից շատ հոգատար ու վախենալ իրենց վարքով կամ խոսքով նեղացնել երեխային: Իհարկե դրսևորումները հուզական դաշտում տարբեր կարող են լինել, բայց ակնհայտ է այն, որ հուզական բաղադրիչի գերակայությունը պայմանավորված է առավելապես «եղի՛ր կատարյալ» դրայվերով:

Գրականություն

1 **Խանամիրյան Ի.** Ծնողական հրահանգների ազդեցությունը կանացիության ձևավորման վրա, Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր, Երևան, Ասողիկ, 2016, էջ 42-49

2 **Алешина Ю**. Индивидуальное и семейное психологическое консультирование»: Класс; 2004 https://www.e-reading.club/book.php?book=1684.
3 **Березин С.В., К.С. Лисецхий К.С., Серебрякова М.**Словарь психологических терминов, 2002 г http://vocabulary.ru/termin/rol-semeinaja.html, 15.08.2018.
4 **Шнейдер Л.Б.** Семья: оглядываясь вперед. Питер, 2013.
5 **Kahler, T. (1975)**. Drivers: The Key to the Process of Scripts. Transactional Analysis Bulletin, 5(3), 280–284.

ВЗАИМОСВЯЗЬ СЕМЕЙНЫХ РОЛЕЙ И ВЕДУЩЕГО ДРАЙВЕРА У АРМЯНСКИХ ЖЕНЩИН

Ханамирян И.Р. (ЕГУ, Ереван, Армения)
Аракелян М. (Лицей им. А.Ширакаци, Ереван, Армения)

Основы жизненных установок, представлений, отношений, ролевых сценариев лежат в детстве. Естественно, что ключевую роль играют отношение, установки и драйверы, данные родителями, особенно матерьми. Данные представления особенно тщательно изучались представителями транзактной шклы. В частности, Т. Калер, выделяет 5 основных драйверов, которые имеют влияние на формирование поведенческих реакций во взрослой жизни. В статье предсатвленно исследование взаимосвязи драйверов и семейных ролей армянских женщин, выделены доминирующие драйверы, приводящие к тем или иным поведенческим паттернам.

Ключевые слова: *ведущий драйвер, жизненный сценарий, семейная роль.*

THE CORRELATION BETWEEN FAMILY ROLES AND LEADING DRIVER IN ARMENIAN WOMEN

Khanamiryan I.R. (YSU, Yerevan, Armenia)
Arakelyan M. (Lyceum after Anania Shirakatsy, Yerevan, Armenia)

The basics of life attitudes, beliefs, relationships and role scenarios lie in childhood. The most important for child's further life are the attitudes and drivers given by parents, especially by mother. These messages are carefully studied by the representatives of the transactional approach. In particular, T. Kahler identifies 5 main drivers that have a huge impact on the formation of behavioral reactions in adulthood. The article presents a study of the correlation between the drivers and family roles of Armenian women and highlights the dominant drivers leading to certain behavioral patterns.

Keywords*: leading driver, life scenario, family role.*